

անհաղտն է։ Վիշնուի արշաւանքները պատմելով՝ գրեթէ Սիւայի ամբողջ պատմութիւնը ըրած ենք. որովհետև Վիշնու երկրի և մարդոց համար կոռուելու ատեն։ Սիւայի հետ կը պատերազմէր, որ այս չար սգւոց կիրապարանու, արարչութեան գործը կ'աւրեր կ'ապականէր։ և Սիւա հինգ գլուխ ունի, չորս ձեռք և երեք աչք իւր գլխաւոր ճակարն վրայ։ Նանաի ցուլին կոնակին վրայ է։ Կը նկարեն զնս սպառնալից և ահեղ, ոուր և հատու ակռաներով լի են իւր լնգերը, իւր բաց չըթունքներէն բոց կ'ելիէ, իւր բոցարձակ վարսից վրայ ապարօշ կը կազմեն մարդ կայլն գանգեր, և մանեակն կախ կրծոց վրա։ օձեր կը վիստան իրանին և բազկաց շրա կողմն. ցուլին տեղն՝ վագրն է։ վերջաւէս իւր մարմինն ամբողջ մոիրագոյն ճերմակ գոյն մ'ունի, ահաւոր նշան հրաշէկութեան և անհաջտ ապականութեանց։

Ասոնք են Հնդկաց աստուածներն և դիցարանութեան գլխաւոր առասպելներն։ Եթէ մէկն ուզէ ստորակարգ աստուածները թուել, բոյզր անոնց արկածները պատմեն և հակասական պատմութիւններն համաձայնեցնել, հաստորներ ալ գրելով։ չի կրնար։

Ա. Ղ. Բ Ե Ր Ա Կ Ն

Յորդ աղբերակն արծաթափայլ,
Հով զեփիւսին վայր ցանկացեալ,
Դու ոյր քաղցրիկ գըգըշման ձայն
Գոգցես հառաջ խոր հեծութեան.
Ո՛հ իմ սըրտի բըլրակ հեշտին,
Զոր գեղասահ ալիք քոյին
Բազմազըւարճ գեղազարդեն.
Քանի՛ զըւարթ քոյդ դարաստր են,
Բւր ես ճեմել գամ միայնիկ
Ելնչել անդէն զով քաղցրասիք։

Մինչ վարդագոյն այգ նորածին.
Զիս տեսանէ աստ զառաջին,
Կոխեալ առ ոտն ըզգեղ՝ դալար
Ի բուրազուարթն իմ՛ ճանապարհ,
Ամբոխ խորհուրդք իմոյս սըրտի,
Բնդ ծաղկաճեմ դաշտ դալարի,
Ըզգետ երթան ջուրց վըտակաց,
Եւ ըզմարդկան յուղեալ կենաց
Գահավիժեալ գնացիցն անդէն
Զըստոյդ պատկեր ինձ գըծագրեն։

Թարգման. Մուհրան թուրոսնեան

ԺԷԲՈՑ

ՏՊՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ